ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
«03» 11 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000109

Ձեռնարկողը՝ ***«Հայասա» ԱԿ***
Արարատի մարզ, Երևան-Երասխ մայրուղի թիվ 40

Գործունեությունը՝ ***Շաղափի կրաքարերի հանքավայրի Շերտ-1 (բլոկ 1 C_1) բացահանքի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000105

<03> 11 2020թ.

Արարատի մարզի Շաղափի կրաքարերի հանքավայրի Շերտ-1 (բլոկ 1 C_1) բացահանքի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Հայասա» Արտադրական կոոպերատիվ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն «Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, Ուրցաձոր համայնք

Արարատի մարզի Շաղափի կրաքարերի հանքավայրի Շերտ-1 (բլոկ 1 C_1)-ի բացահանքում «Հայասա» ԱԿ-ի կողմից նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:

Հանքավայրից հայցվող տարածքի մակերեսը կազմում է մոտ 1.6հա:

Շաղափի կրաքարի հանքավայրը գտնվում է Արարատի մարզում՝ Վեդի քաղաքից մոտ 11կմ արևմուտք, Շաղափ գյուղից՝ մոտ 2.7կմ հյուսիս-արևելք:

Հանքավայրից հայցվող տարածքը բնութագրվում է հետևյալ կոորդինատներով (Arm WGS-84 համակարգով).

1. 8486840.4577, 4416137.4267
2. 8486874.4378, 4416223.8558
3. 8486923.2570, 4416210.3636
4. 8486969.3376, 4416161.7377
5. 8487015.8703, 4416081.7638
6. 8486955.0000, 4416053.0000
7. 8486888.0046, 4416078.2291
8. 8486840.4577, 4416137.4267

Գործունեության համար նախատեսված տեղամասը գտնվում է ծովի մակերևույթից 1320-1380մ բարձրության վրա և ունի կտրտված առանձին բլուրներով արտահայտված ռելիեֆ:

Կլիման միջին լեռնային ցամաքային է (ամռանը մինչև +30°C, իսկ ձմռանը՝ 10-ից -15°C): Տարեկան միջին ջերմաստիճանը +15°C է: Մթնոլորտային տեղումների

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТНОЙ КОМИССИИ COMMISSION OF EXPERTS

տարեկան միջին քանակը չի գերազանցում 300-400մմ: Տեղանքը զուրկ է անտառային և բուսական ծածկույթից:

Շաղափի կրաքարերի հանքավայրի շահագործումը կկատարվի բաց մշակման եղանակով՝ երկու բացահանքերով:

Առաջին բացահանքը կընդգրկի առաջին շերտը և կունենա 30մ խորություն (1347-1377,0մ հորիզոն): Երկրորդ բացահանքը կընդգրկի երկրորդ շերտը և կունենա 22մ խորություն (1321-1342,5մ հորիզոն):

Օգտակար հանածոյի պաշարները որոշվել են լեռնային զանգվածի և մակաբացման ապարների (երկրաբանական բլոկների մեթոդով հաշվարկված) ծավալների տարբերությամբ:

Շաղափի հանքավայրի կրաքարերը համապատասխանում են ԳՕՍՏ-17498-72 և ՀՍՏ 21-10-74 պահանջներին, կարող է օգտագործվել որպես հումք կավճի արտադրության համար:

Հանքավայրի օգտակար հանածոյի պաշարները հաստատվել են ՀՀ բնապահպանության նախարարության ՕՀՊԳ-ի 11.07.2005թ.-ի N72 որոշմամբ ըստ C_1 կարգի 447.1 հազ.տ. քանակություններով:

Բացահանքի սույն նախագծով նախատեսվում է շահագործել բլոկ 1-C_1-ի մնացորդային պաշարները ամբողջությամբ՝ առանց հորատապայթեցման աշխատանքների:

«Հայասա» ԱԿ-ի կողմից նախատեսվում է՝

- Հանքարդյունահանման աշխատանքները կատարել բաց լեռնային աշխատանքներով:
- Արդյունահանված կրաքարերի զանգվածը տեղափոխել մինչև 35կմ հեռավորության վրա գտնվող մշակման արտադրամաս:
- Հանքարդյունահանման աշխատանքները կատարել մեխանիկական աշխատանքների եղանակով, առանց պայթեցման աշխատանքների:
- Կատարել փոշեառաջացման օջախների ջրում:
- Խախտված հողերի լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա:

Ծառայման ժամկետը կազմելու է 32,4 տարի:

Նախագծված բացահանքերը վերջնական դիրքում կունան հետևյալ պարամետրերը.

- առավելագույն երկարությունը՝ 185մ
- առավելագույն լայնությունը՝ 105մ
- մշակման առավելագույն խորությունը՝ 25մ
- օտարման տարածքը՝ 1.6հա
- մնացորդային հաշվեկշռային պաշարների քանակը՝ 133436մ^3 (380902.4տ)
- արդյունաբերական պաշարների քանակը՝ 129436մ^3 (320983տ)
- մակաբացման ապարների քանակը՝ 7350մ^3
- հանքաստիճանի բարձրությունը՝ 5մ
- հանքաստիճանի թեքման անկյունը՝ 50^0
- անվտանգության բերմայի նվազագույն լայնությունը՝ 2մ
- բացահանքի կողի առավելագույն թեքությունը՝ 45^0
- մակաբացման միջին գործակիցը՝ 0.023մ^3/տ:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը ըստ կրաքարերի զանգվածի համաձայն տեխնիկական առաջադրանքի ընդունված է 4000մ^3/տարի կամ 9919.4տ/տարի: Հեռացվող մակաբացման ապարների տարեկան քանակը հաշվարկային տարում կլինի 600մ^3/տարի:

Բացահանքը արևմտյան մասի մոտեցող ավտոճանապարհով փաստացի բացված է: Լեռնային աշխատանքները կարգաբերելու նպատակով նախատեսվում է հանքաստիճանների բացումը կատարել հարավ-արևմտյան մասից մոտեցող միջհանքային ավտոճանապարհից հորիզոնական բացող կիսախրամների անցումով:

Հանքավայրի լեռնատեխնիկական և լեռնաերկրաբանական պայմանները կանխորոշում են բացահանքի շահագործումը կատարել միակողանի ընդլայնական ընթացքաշերտերով մշակման համակարգով մակաբացման ապարները արտաքին լցակույտ տեղափոխելով:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները կանխորոշում են նրա նախնական փխրեցումը արդյունահանման աշխատանքներից առաջ:

Նախնական փխրեցումը նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով, Hyundai-220 էքսկավատորին սարքավորված DMM-230 հիդրավլիկ մուրճի միջոցով: DMM-230 հիդրավլիկ մուրճի հերթափոխային արտադրողականությունն ըստ տեղեկատու տվյալների կազմում է միջինը 170մ^3/հերթ կամ 23.6մ^3/ժամ:

Հանքարդյունահանման աշխատանքները բացահանքում նախատեսվում է կատարել շուրջ տարի, 5-օրյա աշխատանքային շաբաթով: Աշխատանքների օրերի քանակը տարում ընդունված է 260 օր, հերթափոխի քանակը օրում՝ 1, հերթափոխի տևողությունը՝ 8ժամ:

Օգտակար հանածոյի տեղափոխումը մինչև Արտաշատ քաղաքում գտնվող վերամշակման արտադրամաս (տեղափոխման հեռավորությունը 35կմ) և մակաբացման ապարների տեղափոխումը լցակույտ (0,15կմ) կատարվում է 10տ բեռնատարողությամբ (V=6,0մ^3) ԽՈՎԸի-5511 մակնիշի ավտոինքնաթափերի միջոցով:

Նախատեսվող արդյունահանման տեղանքում աղմուկի և տատանումների աղբյուր կարող են հանդիսանալ բացահանքը, լցակույտը և ավտոտրանսպորտային միջոցները: Ելակետային իրավիճակում հանքավայրի տարածքում աղմուկի մակարդակը ցածր է, գործնականում աղմուկի աղբյուրները մարդածին չեն:

Աշխատանքային հրապարակում առաջացող աղմուկի նվազեցման նպատակով մեքենաները պետք է սարքավորված լինեն ձայնախլացուցիչներով, որպեսզի աղմուկի մակարդակը բնակելի գոտում չգերազանցի նորմերը:

Բացահանքից մթնոլորտ են արտանետվում փոշի և գազեր: Մեկ տարում առաջացող փոշու քանակը կլինի 0.208տ/տարի:

Բացահանքում ինքնաթափերով մակաբացման ապարները տեղափոխվում են արտաքին լցակույտ 0,15կմ հեռավորության վրա, իսկ օգտակար հանածոն՝ մինչև վերամշակման արտադրամաս:

Լցակույտը կազմակերպվում է բացահանքին զուգահեռ, որի տարեկան միջին գործող մակերեսը կազմում է 200մ^2: Լցակույտի տարածքը տարեկան 4 ամիս (մոտ 120 օր) գտնվում է խոնավ պայմաններում և այդ ժամանակահատվածում փոշիացում տեղի չի ունենում: Լցակույտի տարեկան արտանետումը կկազմի 1.32տ/տարի

Փոշու արտանետումների քանակը խիստ նվազեցնելու նպատակով նախագծով նախատեսվում է թաց հորատում, հանվող և բարձվող ապարների թրջում և ճանապարհների ջրցանում չոր եղանակներին, լցակույտի ռեկուլտիվացիա: Այս միջոցառումները թույլ կտան փոշու արտանետումները կրճատել 80-90%-ով:

Գազերի (վնասակար նյութերի) արտանետումները կախված են բացահանքում աշխատող մեքենաների ու սարքավորումների շարժիչներում տարբեր վառելիքների ծախսերի հետ:

Բացահանքի ջրամատակարարումը կկատարվի բացահանքի արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, աշխատանքային հրապարակները

հանքախորշերը և մուտքային ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար: Խմելու ջուրը բերվում է ՃԹ-1,2 մակնիշի կցովի ցիստեռնով պայմանագրային կարգով: Տեխնիկական ջուրը մատակարարվում է ԿՕ–002 մակնիշի ջրցան – լվացող ավտոմեքենայով պայմանագրային կարգով:

Հանքավայրի տարածքում երկրաբանական ուսումնասիրության և շահագործման աշխատանքների ընթացքում կատարվել են հիդրոերկրաբանական հետազոտություններ, ինչով հաստատվել է գրունտային ջրերի հորզոնների բացակայությունը: Հանքավայրի տարածքում կարստային դատարկություններ և գրունտային ջրերի հորիզոններ չկան:

Հանքավայրից 1.3կմ հյուսիս հոսում է Սելավ գետը՝ Վեդի գետի ձախ վտակը:

Շաղափի հանքավայրի շրջանի հողածածկույթը ներկայացված է լեռնամարգագետնային, դարչնագույն անտառային, շագանակագույն, գորշ կիսաանապատային հողերով և սևահողերով:

Նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների և բույսերի տեսակներ հայտնաբերված չեն: Շաղափի կրաքարի հանքավայրի տարածքը չի առնչվում բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքների հետ:

Արդյունահանման աշխատանքների շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, կենսաբազմազանության պահպանությանը: Նախատեսվել են նաև աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հնարավոր սոցիալական ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Ընկերության կողմից, արդյունահանմանը զուգընթաց իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական մշտադիտարկումների պլանում և որպես օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, կենսաբազմազանությունը:

Հանքավայրի շահագործման հետևանքով աղտոտող նյութերի արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը գնահատվում է տարեկան առավելագույնը՝ 1.49մլն.դրամ:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Արարատի մարզի Ուրցաձոր համայնքում անցկացվել են հանրային քննարկումներ: Փորձաքննական գործընթացին մասնակցել են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության նախարարությունը, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման դեպքում գործունեության իրականացման ընթացքում օդի ու հողի աղտոտվածությունը կգտնվի թույլատրելի

նորմերի սահմաններում և կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցության ռիսկերը նվազագույն կլինեն:

Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել 22 փետրվարի 2018թ. N191–Ն որոշման պահանջներով՝ շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը՝ ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
2. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
3. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտանետվող փոշու, առաջացող աղմուկի, թրթռումների թույլատրելի մակարդակները, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոնն ու նորմերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայասա» արտադրական կոոպերատիվի կողմից ներկայացված Արարատի մարզի Շաղափի կրաքարերի հանքավայրի Շերտ-1 (բլոկ 1 C_1) բացահանքի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Մասնագետ՝ Մ. Ավետիսյան